



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52<sup>ա</sup> • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52<sup>а</sup> •  
52<sup>a</sup> Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,  
armphilology@ysu.am, [www.ysu.am](http://www.ysu.am)

### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ Յ

### ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՄՈՐՀՐԴԻ՝

### 2023 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 15 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ

#### *Օրակարգում՝*

1. Հանդիպում ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանի հետ:
2. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 31-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ: Դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպելու, ուսումնագիտական գործընթացին առնչվող հարցերը քննարկելու, դիտարկումներ և առաջարկներ լսելու նպատակով ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը մասնակցում է գիտխորհրդի ընդլայնված նիստին:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նախ գոհունակություն հայտնեց հայ բանասիրության ֆակուլտետում ծավալված գիտաուսումնական աշխատանքների և առաջընթացի համար, շնորհակալություն հայտնեց դեկանին՝ դոց. Ա. Գալստյանին: Պարոն Հ. Հովհաննիսյանը հանգամանալից ներկայացրեց համալսարանում իրականացվող մեծածավալ նորարարական ծրագրերն ու նախագծերը, որոնք ուղղված են ն՝ ուսումնական գործընթացի, և՛ գիտական մտքի առաջընթացին ու զարգացմանը: Ռեկտորը ներկայացրեց, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարել ԵՊՀ-ն բռնի տեղահանված արցախահայությանը օգնություն ցուցաբերելու առումով: ԵՊՀ-ն ամեն հնարավոր բան արել է արցախցի ուսանողներին համալսարանի տարբեր ֆակուլտետներում ընդունելու, ուսումնական գործընթացում նրանց լիարժեքորեն

ներգրավելու, ուսման վարձերի փոխհատուցումն ապահովելու ուղղությամբ: Ռեկտորը նշեց, որ համալսարանը իր ուսումնասիրտադրական բազաները տրամադրել է արցախցի ընտանիքներին, ինչպես նաև ֆինանսական միջոցներ է տրամադրել նաև նրանց ընդունելու, կացարանով, սնունդով և անհրաժեշտ այլ կենցաղային պարագաներով ապահովելու համար:

Պարոն Հ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ համալսարանը հաջողությամբ սկսել է մագիստրոսական ծրագրերի միջազգային հավատարմագրման գործընթացը, որը շատ կարևոր է համալսարանական որակավորման միջազգային ճանաչման համար: Ռեկտորը նշեց նաև, որ ի ուրախություն ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի՝ ԵՊՀ-ն ձեռք է բերել համաշխարհային վարկանիշ ունեցող մի քանի գրադարանների անդամակցություն, ինչը լայն հնարավորություններ է տալիս համալսարանի և՛ դասախոսներին, և՛ ուսանողներին ազատորեն օգտվելու այդ գրադարանների շտեմարաններից:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ասաց, որ սկսվել են վերանորոգվել ԵՊՀ մի քանի հանգստյան տներ, և համալսարանականները հնարավորություն կունենան հանգստանալու լավագույն պայմաններով: Ռեկտորը նաև տեղեկացրեց, որ համալսարանի տարբեր մասնաշենքերում շարունակվում են վերանորոգման աշխատանքները:

Ռեկտորը տեղեկացրեց, որ համալսարանում 2-րդ կիսամյակից ներդրվելու է պրոֆեսորների և դոցենտների օգնականների համակարգը. մագիստրոսները և ասպիրանտները կարող են, ըստ իրենց ցանկության, նշանակվել պրոֆեսորի կամ դոցենտի օգնական, և այդ հանգամանքը ուսանողի համար կդիտարկվի որպես ուսումնասիրտադրական պրակտիկա:

Ամփոփելով խոսքը՝ համալսարանի ռեկտորը ընդգծեց, որ անհրաժեշտ է համառ աշխատասիրությամբ ու ինքնանվիրումով հասնել նոր նվաճումների, վերացնել բացթողումներն ու թերացումները:

Պարոն Հ. Հովհաննիսյանը պատասխանեց նաև գիտխորհրդի անդամներին հուզող այլ հարցերի ևս:

**Ընթացիկ հարցերում քննարկվեցին.**

**ա/ ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Գևորգ Արշավիրի Գյուլումյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Ջրբաշյանը և Ս. Մուրադյանը:

Նշվեց, որ Գևորգ Գյուլումյանը ջանասիրաբար աշխատել է իր թեկնածուական ատենախոսության վրա, բայց անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել հետազո-

տության շրջանակը: Ըստ այդմ՝ նպատակահարմար է կոնկրետացնել հայցորդի թեկնածուական աշխատանքի թեմայի վերնագիրը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Գևորգ Արշավիրի Գյուլումյանի թեկնածուական ատենախոսության «Ազգային գոյապայքարի գեղարվեստական արտացոլումները 19-րդ դարի հայ պատմավիպասանության մեջ» նախկին թեման փոխել հետևալով՝ «Ազգային գոյապայքարի գեղարվեստական մարմնավորումը Բաֆ-ֆու ստեղծագործության մեջ»:

2. Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Վազգեն Հմայակի Սաֆարյան:

**Բ/ ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Նարինե Արշակի Արշակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. Պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Զրբաշյանը, Վ. Եղիազարյանը:

Նշվեց, որ հայ բանահյուսական ժանրերի վերաբերյալ նոր ուսումնասիրությունների կարիք միշտ կա, և Ն. Արշակյանի գիտական հետաքրքրություններն էլ հնարավորություն են տալիս թեկնածուական ատենախոսության թեմա ընտրել հենց այդ ոլորտի շրջանակներում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմություն և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Նարինե Արշակի Արշակյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայոց պարերգային բանահյուսության հիմնական առանձնահատկությունները»՝ Ժ. 01.05 - «Բանահյուսություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար նշանակել ամբիոնի դոցենտ, Բ. Գ. Թ. Նվարդ Խաչատուրի Վարդանյանին:

**Գ/ ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Անի Պետրոս-Բարցումիանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. Պրոֆ. Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Զրբաշյանը, Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ հայցորդի գիտական հետաքրքրությունները վերաբերում են գրականության տեսությանը, և ամբիոնը թեկնածուական ատենախոսության թեմա առաջարկում է այդ ոլորտից:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Անի Պետրոս-

Բարցումիանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Գրական միաստիֆիկացիայի ֆենոմենը ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ (Ս. Կիսինի (Մունի) ստեղծագործության նյութի վրա)» Ժ. 01.04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար նշանակել ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Աշխեն Էդուարդի Ջրբաշյանին:**

դ/ **ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Նորա Հրայրի Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. Պրոֆ. Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ դրամատուրգիայի և Գ. Սունդուկյանի վերաբերյալ նոր ուսումնասիրությունների կարիք միշտ կա, և Ն. Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեմա առաջարկվում է այդ այդ ոլորտից:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Նորա Հրայրի Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «**Գաբրիել Սունդուկյանը և 19-րդ դարի արևելահայ դրամատուրգիան**» Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար նշանակել ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. **Ալբերտ Արշավիրի Մակարյանին:**

ե/ **ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Տաթևիկ Արմենի Մանուկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. Պրոֆ. Ա. Աբաշյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ն. Դիրբարյանը, Ս. Ավետյանը, Թ. Տոնոյանը:

Նշվեց, որ Տաթևիկ Մանուկյանը ջանասիրաբար աշխատել է իր թեկնածուական ատենախոսության համար անհրաժեշտ տեսական և գործնական աղբյուրները հավաքելու ուղղությամբ, բայց անհրաժեշտություն է առաջացել փոխել հետազոտության շրջանակը: Ըստ այդմ՝ նպատակահարմար է փոխել հայցորդի թեկնածուական աշխատանքի թեմայի վերնագիրը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Տաթևիկ Արմենի Մանուկյանի թեկնածուական ատենախոսության «**Գրիգոր Նյուսացու «Վասն մարդոյ կազմության» աշխատության լեզուն եւ ոճը**» նախկին թեման փոխել հետևյալով՝ «**Գրիգորիսի «Քննութիւն մարդոյ և նորին ցաւոց» աշխատության լեզուն**»:

2. Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոց. **Նարինե Հակոբի Դիլբարյան:**

**զ/ ԼՍԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի դասախոս Արսեն Վրույրի Վարդանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. Պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Բ. Ներսիսյանը, Զ. Աղաջանյանը, Թ. Տոնոյանը:

Նշվեց, որ Ա. Վարդանյանը դասավանդման երկար տարիների փորձ ունի և զբաղվում է հայոց լեզվի ուսուցման խնդիրներով: Ատենախոսության թեմա առաջարկվեց ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանության ուսումնասիրության և ուսուցման հիմնահարցերի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Հայոց լեզվի ամբիոնի դասախոս Արսեն Վրույրի Վարդանյանի ատենախոսության թեմա հաստատել **«Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանության ուսումնասիրության և ուսուցման հիմնահարցեր»** (Ժ 02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ):

2. Ա. Վարդանյանի գիտական ղեկավար նշանակել Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Յուրիկ Սրապիոնի Ավետիսյանին:**

**Է/ ԼՍԵՑԻՆ** - ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտ, հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, դոց. դոց. Ս.Գրիգորյանը, Ա. Զրբաշյանը, Վ. Եղիազարյանը:

Նշվեց, որ հայցորդը խորությամբ զբաղվում է Վ. Սիրադեղյանի արձակի ուսումնասիրությամբ, ուստի ամբիոնը ատենախոսության թեմա է առաջարկում **«Հրանտ Մաթևոսյանի ավանդները Վանո Սիրադեղյանի ստեղծագործության մեջ»:**

**ՈՐՈՇԵՑԻՆ** - 1. Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Հովհաննես Հովակիմյանի ատենախոսության թեմա հաստատել **«Հրանտ Մաթևոսյանի ավանդները Վանո Սիրադեղյանի ստեղծագործության մեջ»** (Ժ 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ):

2. Գիտական ղեկավար նշանակել Բան. թեկնածու, դոցենտ **Սեյրան Զավենի Գրիգորյանին:**

**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒԼՏԵՏԻ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ա. ԳԱԼՍՅԱՆ**

**Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ**